

ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
(ՀՀ կրթական հաստատությունների օրինակով)

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Է. Ս.

Հայաստանի Հանրապետությունում միջնակարգ ընդհանուր կրթությունն իրականացվում է եռաստիճան համակարգով՝ տարրական դպրոց՝ 4 տարի (1–4-րդ դասարաններ), միջին դպրոց՝ 5 տարի (5–9-րդ դասարաններ), ավագ դպրոց՝ 3 տարի (10–12-րդ դասարաններ):

Ավագ դպրոցականների տարիքային խմբում ընդգրկված են 15–18 տարեկան երեխաները (ուշ դեռահասության և վաղ պատանեկության շրջան): Ինչպես դեռահասության, այնպես էլ պատանեկության շրջանները տարիքային հոգեբանության ուսումնասիրման բաժիններից են: Տարբեր հոգեբաններ և մանկավարժներ այդ տարիքային շեմերին տարբեր բաժանումներ են տվել: Ա. Ա. Ռեանը դեռահասներ է համարում 11-15 տարեկաններին, պատանիներ՝ 16-19 տարեկաններին<sup>1</sup>:

Ի. Յու. Կուլագինան ավագ դպրոցական տարիքն առանձնացնում է հետևյալ կերպ՝ վաղ պատանեկություն՝ 16–17 տարեկան, իսկ պատանեկություն՝ 17-ից 20-23 տարեկան: Վ. Ս. Մուխինան պատանեկությունը համարում էր դեռահասությանը հաջորդող շրջան՝ մինչև հասունություն ընկած հատվածը՝ 15–16-ից՝ 21–25 տարեկան<sup>2</sup>: Վերջին ժամանակաշրջանում նորարական տեխնոլոգիաները առավել ակտիվ են ներթափանցում ուսումնական գործընթացների մեջ: Դրան զուգահեռ՝ դպրոցները տարանջատվում են ըստ թեքումների՝ ֆիզիկամաթեմատիկական, հումանիտար, տեխնիկական և այլն: Համաձայն Վ. Ի. Պոպովի, Վ. Վ. Ռուբցովի, Վ. Ա. Յասվինայի, Վ. Ի. Սլաբոդչիկովի և այլ հոգեբանների՝ անձի ինքնագիտակցության փոփոխությունները պայմանավորված են իրենց կրթական միջավայրով: Ինքնագիտակցությունը տևական գործընթաց է, որն անհատի և նրա շրջապատի փոխազդեցության հետևանք է: Մարդկային «Ես»-ը փոփոխվում է իր կյանքի պայմանների փոփոխվելուն զուգահեռ<sup>3</sup>:

<sup>1</sup> Реан А. А. Психология человека от рождения до смерти, СПб., 2002, с. 326.

<sup>2</sup> Дарвиш О. Б. Возрастная психология, М., 2003, с. 98.

<sup>3</sup> <http://festival.1september.ru/articles/588770/>

Ըստ Լ. Դ. Ստոյարենկոյի՝ դեռահասության տարիքում նկատվում են հետևյալ անձնային նորագոյացությունները.

- առաջանում է «մեծահասակության զգացում»,
- ինքնագիտակցության ձևավորում,
- ինքնորոշման և ինքնահաստատման ձևավորում<sup>4</sup>:

Ավագ դպրոցականին բնորոշ բնութագրական առանձնահատկություններից է նրա ինքնագիտակցության աճը՝ պայմանավորված նաև շրջապատողներին և սեփական անձին ներկայացվող պահանջներով: Այդ տարիքին բնորոշ հատկանիշներից է առավել քննադատող և ինքնաքննադատող լինելը:

Վ. Ֆ. Սաֆինն ուսումնասիրել է ավագ դպրոցականների կողմից համադասարանցիների անձնային հատկանիշներին և բարոյական որակներին տրվող առանձնահատկությունները: Ըստ այդմ՝ նրանց համար առաջնային են հասակակիցների կամային հատկանիշները: Այսպես, ավագ դպրոցականները բարձր պահանջներ են ներկայացնում համադասարանցիների բարոյական որակների նկատմամբ: Դա լավ հիմք է բարոյական դիրքորոշումների ձևավորման համար:

Ուսումնասիրություններից պարզ է դարձել նաև այն, որ անձնային որակների գնահատման ժամանակ գնահատողի սեռային պատկանելությունը ևս կարևորվում է: Ավագ դպրոցականների շրջանում դրսևորվում է զգուշավորություն: Նրանք առավել շատ նշում են իրենց թերությունների, քան առավելությունների մասին: Ե՛վ աղջիկները, և՛ տղաներն իրենց բնորոշ հատկանիշներից առանձնացնում են «բնկունությունը», կոպտությունը, էսակենտրոնությունը և այլն: Դրական հատկանիշների մեջ առավել հաճախ նշում են ընկերության մեջ հավատարմությունը, ընկերներին չդավաճանելը, ծանր իրավիճակներում օգնության հասնելը և այլն: Առաջնային են դառնում այն հատկանիշները, որոնք կարևորվում են հասակակիցների հետ շփում հաստատելու գործընթացում, կամ այն հատկանիշները, որոնք խոչընդոտում են դրան: Բարձր ինքնագնահատականը բացահայտվում է այն ժամանակ, երբ նա գերագնահատում է իր ուժերը<sup>5</sup>:

Ավագ դպրոցականների ինքնագիտակցությունը տարբերվում է էսակենտրոնությամբ, որը դրական նշանակություն ունի: Այն թույլ է տալիս բացահայտելու իրենց եզակի ներքնաշխարհը, ձևավորելու աշխարհայացք և այլն:

<sup>4</sup> Столяренко Л. Д. Педагогическая психология, Ростов н/Д, 2004, с. 314.

<sup>5</sup> Матюхина М. В., Михальчик Т. С., Прокина Н. Ф. Возрастная и педагогическая психология, М., 1984, с. 280-281.

Ինքնագիտակցության զարգացումն այդ տարիքում հիմնականում տեղի է ունենում հետևյալ կերպ՝

1. նույնականության գիտակցումը՝ «Ես»-ի և ոչ «Ես»-ի սահմանափակում.

2. «Ես»-ի տարանջատումը, որի գիտակցումը տեղի է ունենում դեռևս երեք տարեկանում, երբ երեխան իրեն առանձնացնում է որպես գործունեության սուբյեկտ.

3. սեփական կրթական որակների գիտակցում (անհատականության գիտակցում).

4. ինքնագիտակցության սեփական բարոյական համակարգի ուսումնասիրում:

Ավագ դպրոցականների շրջանում առաջանում է ուշադրություն իրենց մարմնի և դրա ձևափոխման նկատմամբ: Շատ ծանր են ընկալում ցանկացած արտաքին թերությունները (ցածրահասակությունը, գիրությունը, մանկական դիմագծերը և այլն): Մեծանում է ինքնավերահսկողությունը: Դա հենց «Ես»-ի կերպարն է, որը հանդես է գալիս իրական «Ես»-ի (ինչպիսին նա կա), դինամիկ «Ես»-ի (ինչպիսին ձգտում է լինել), իդեալական «Ես»-ի (ինչպիսին պետք է լինի), ֆանտաստիկ «Ես»-ի (անիրական) ձևով: Պարբերաբար տեղի է ունենում համեմատություն. այն, ինչին հասել է նա տվյալ պահին, այն, ինչ ակնկալում էր, որ պետք է լինի: Անընդհատ վերլուծում է իր մասին հնչած կարծիքները, որոնք ասել են շրջապատողները: Այդ տարիքում առավել ընդգրծված է լինում «Մենք» հասկացությունը<sup>6</sup>:

Պատանիների տարիքի կենտրոնական հիմնախնդիրներից է դառնում կյանքի իմաստի փնտրտուքը: Պատանու համար կարևորվում է «Ինչպիսի՞ն դառնալ» հարցը: Պատանիների տրամադրությունը հաճախակի և կտրուկ փոփոխվում է: Նրանց շրջանում նկատվում է տազնապայնության բարձր աստիճան: Պատանին անընդհատ ինքնավերլուծության և գիտելիքների համակարգման ու ընդարձակման պահանջ է ունենում: Առաջանում է ինքնահաստատման ձգտում: Ինքնահարգանքը նույնպես առաջնային գնահատական է ստանում: Հակադրվում են պատանու իրական և իդեալական «Ես»-երը:

Պատանիների հաղորդակցումը ծնողների հետ հիմնականում մասնագիտական թեմաներով է լինում: Կարևորություն է տրվում հասակակիցների հետ շփմանը: Առաջնային մտահոգություններից են դառնում կյանքի ընկերոջ փնտրտուքները: Քանի որ այդ տարիքում տեղի է ունենում սեռական հասունացում, հետևաբար առաջանում են նաև սեռական ցանկություններ: Ըստ Ե. Ե. Սապոգովայի՝ պատանիների «Ես»-ի կերպարն ավելի կայուն է<sup>7</sup>:

<sup>6</sup> <http://festival.1september.ru/articles/588770/>

<sup>7</sup> Сапогова Е. Е. Психология развития человека, М., 2005, с. 357-360.

Ավագ դպրոցականը կանգնում է ինքնուրույն կյանք անցնելու շեմին: Նրա առջև ծանունում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են աշխատանքի տեղավորվելը, կյանքում սեփական տեղը գտնելը, հասարակական պարտականություններ կրելը և այլն: Այս ամենով պայմանավորված՝ ավագ դպրոցականի նկատմամբ փոխվում են պահանջները:

Վ. Խ. Սլոբոդչիկի կարծիքով՝ պատանեկության տարիքը անհատականացման եզրափակիչ փուլն է: Առաջնային գործունեությունը ուսուցողամասնագիտականն է: Ապագայի հետ կապված բոլոր մոտիվներն արթնանում են ուսումնական գործունեության ընթացքում և «ստիպում են» սովորել: Ուսումնական առարկաների նկատմամբ առաջանում է ընտրողական վերաբերմունք<sup>8</sup>:

Մթենլի Հոլլը դեռահասությունը բնութագրում է որպես ինքնագիտակցության ճգնաժամի, անհատական զգացողության ձևավորման շրջան<sup>9</sup>:

Հաշվի առնելով տարիքին բնորոշ անհատական առանձնահատկությունները և ձևավորված ինքնագիտակցությունը՝ փորձեցինք պարզել, թե որքանով են տարբերվում հանրակրթական և այլընտրանքային (վայր, որտեղ, բուն դասաժամերից բացի, աշակերտները մասնակցում են նաև տարաբնույթ ակումբների, խմբակների աշխատանքներին և ակտիվորեն դրսևորում իրենց ստեղծագործական կարողությունները) կրթահամալիրի ավագ դպրոցականների՝ իրենք իրենց մասին ունեցած պատկերացումները: Դրա համար հետազոտություն ենք անցկացրել Երևանի 2 դպրոցներում՝ հ. 170 ավագ դպրոցում և «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի ավագ դպրոց վարժարանում: Հարցմանը յուրաքանչյուր դպրոցից մասնակցել է 40-ական աշակերտ:

Հ.170 ավագ դպրոցում կրթությունը հոսքային է: Սովորողը պետք է ուսանի ուսումնական յուրաքանչյուր բնագավառի առնվազն մեկ հանրակրթական կամ մեկ մասնագիտական առարկա և առնվազն 3 առարկա՝ հոսքային ծրագրով: Սովորողի շարաթական ծանրաբեռնվածությունը 30 ժամ է: Լրացուցիչ առարկաները նախատեսված են սովորողների ընդհանուր ճանաչողական և կրթական պահանջմունքների բավարարման, ինչպես նաև հետագա մասնագիտական կրթությանն առավել լավ նախապատրաստվելու համար<sup>10</sup>:

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի ավագ դպրոց վարժարանում կրթությունը այլընտրանքային է: Ուսումնական գործունեության կազմակերպման հիմքում երեք հիմնական սկզբունքներ են՝ մարդասիրություն, ազատություն, ստեղծականություն:

Ուսումնական գործընթացը կազմակերպվում է առանձին դասընթացների ուսումնական պարապմունքների, մասնագիտական փորձառությունների, սովորողների նա-

<sup>8</sup> Дарвин О. Б., նշվ. աշխ., էջ 98:

<sup>9</sup> Խուրդյան Ս. Խ., Անձի զարգացման ճգնաժամային տարիքները, Ե., 2004, էջ 45:

<sup>10</sup> [www.edu.am](http://www.edu.am) (ԳԳՆ պաշտոնական կայք)

խասիրությունների զարգացման ակումբների («Ընթերցասերի», «Անզլիախոսների 1», «Անզլիախոսների 2», «Վրացախոսների», «Արվեստագետի», «Գիտականների», «Տիեզերք», «Ծրագրավորողների», «Կինո-ֆոտոյի», «TV», «Երաժշտական լաբորատորիա», «Երգչախումբ», «Էկոլոգների», «Հայրենագետների», «Արշավականների», «Հոգեբանների», «Տրնտեսագետի»), ուսումնական այցելությունների, ճամփորդությունների և արշավների, ստուգատեսների (այդ թվում՝ հանրակրթական «Դիջիթեք», փառատոներ), ուսումնա-հետազոտական ճամբարների, հասարակական նախագծերի միջոցով:

Յուրաքանչյուր կիսամյակի համար սովորողը կիսամյակը սկսվելուց 2 ամիս առաջ ընտրում է իր ուսումնական ծանրաբեռնվածությունը՝ շաբաթական 34-38 ժամ: Ակումբային պարապմունքը սովորողի համար պարտադիր է: Անհրաժեշտության դեպքում ուսումնական գործունեությունը կազմակերպվում է հեռավար ձևով: Մարզական որևէ ակումբի գործունեությանը սովորողի մասնակցությունը պարտադիր է<sup>11</sup>: Հետազոտության ժամանակ կիրառել ենք Բ. Ստեֆանսոնի՝ 1958 թ. մշակած թեստային «Q - դասակարգման» հարցարանը, որն ուղղված է մարդու՝ ինքն իր մասին ունեցած պատկերացումների բացահայտմանը: Ղեկավարությունն այդ հարցարանը կարող է օգտագործել՝ խմբի անդամների անհատական առանձնահատկությունները բացահայտելու, աշխատակիցների համատեղելիությունը գնահատելու, թիմ ձևավորելու համար:

Հարցվողին տրվում են անձնային հատկանիշներին բնորոշ կամ ոչ բնորոշ հարցեր: Մեթոդիկայի առավելությունն այն է, որ դրանով աշխատելիս փորձարկվողը ցուցաբերում է իր անհատականությունը, այսինքն՝ իրական «Ես»-ը, այլ ոչ թե վիճակագրական չափանիշներին և մնացածների արդյունքներին «համապատասխանությունն ու անհամապատասխանությունը»:

Մեթոդիկան կարող է բացահայտել նաև իդեալական և սոցիալական «Ես»-երը: Հիմնականում մեթոդիկան թույլ է տալիս խմբում որոշել մարդու վարքի 6 հիմնական միտում՝ կախվածությունը, անկախությունը, շփվողականությունը, չշփվելը, «պայքարի» ընդունումը և «պայքարից» խուսափելը:

Կախվածության հակումը դրսևորվում է անհատի՝ խմբային չափանիշներն ու արժեքները (սոցիալական և բարոյաէթիկական) ընդունելու ներքին ձգտմամբ: Շփման հակումը վկայում է խմբում կամ խմբից դուրս հաղորդակցության մեջ մտնելու, շփման մեջ հուզականություն դրսևորելու մասին:

«Պայքարելու» հակումն անձի՝ խմբային կյանքին մասնակցելու, միջանձնային շփման ժամանակ առավել բարձր կոչման հասնելու ակտիվ ձգտում է: Սրա հակառակ կողմը՝ «պայքարից» խուսափելը, ցույց է տալիս չհամագործակցելու ցանկությունը,

<sup>11</sup>[www.avag.mskh.am/](http://www.avag.mskh.am/) («Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի պաշտոնական կայք)

խմբային հակասությունների և կոնֆլիկտների մեջ չխառնվելը, փոխզիջման ցանկությունը: Բոլոր այս հակումներն ունեն ներքին և արտաքին բնութագիր, այսինքն՝ կարող է լինել անհատների ներքին բնութագրիչը կամ արտաքին դիմակը, որը թաքցնում է մարդու իրական դեմքը:

Յուրաքանչյուր հակմանը համապատասխանում են հարցարանի 10 հարցերի պատասխանները. ընդհանուր հարցերի թիվը 60 է: Հարցերին պատասխանում են «Այո» կամ «Ոչ»: Երբ պատասխանողն այնքան էլ վստահ չէ իր ճիշտ պատասխանի առումով, ծայրահեղ դեպքում պատասխանում է «Չգիտեմ»: Մի հակման դրական պատասխանների քանակը գումարվում է դրան հակադիր հակման բացասական պատասխանների գումարին: Օրինակ՝ կախվածության «Այո» պատասխանները պետք է գումարվեն անկախության «Ոչ» պատասխաններին: Եթե պատասխանը մոտ է 20-ին, ապա կարելի է փաստել տվյալ միտումը հաջողությամբ հաղթա-հարելու մասին:

Եթե երկու հակադիր հակումների դրական պատասխանների քանակը նույնն է լինում, ապա կարելի է խոսել տվյալ հակման շրջանակում պատասխանողի ներքին կոնֆլիկտի առկայության մասին, որոնք հավասարազոր դրսևորվում են տվյալ երկու հակադիր հակումներում: Տարբեր հակումներում «Չգիտեմ» պատասխանի 3-4 անգամ կրկնվելը գնահատվում է որպես անվճռականության, խուսափելու, ամաչելու նշան կամ կարող է վկայել վարքի ընտրողականության մասին:

Բդեալական «Ես»-ի բացահայտման պարագայում մեթոդիկան պետք է կիրառել երկրորդ անգամ: Արդյունքները նույն կերպ են վերլուծվում: Գախված հետազոտության նպատակից՝ փորձարկողը տալիս է համապատասխան ցուցումներ<sup>12</sup>:

Արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը. մինչև 20-ն ընկած միջակայքում պատասխանները բաժանել ենք 3 մասի՝ 0-10՝ ցածր, 10՝ միջին, և 10-20՝ բարձր մակարդակ:

Ավագ դպրոցի 40 աշակերտներից 27-ն ունեն անկախության ցածր աստիճան, 2-ը՝ միջին, 11-ը՝ բարձր: Կրթահամալիրի 40 աշակերտներից 7-ն ունեն անկախության ցածր աստիճան, 9-ը՝ միջին, 24-ը՝ բարձր:

Ավագ դպրոցականների շրջանում շփվողականության ցածր աստիճան են դրսևորել 32, միջին՝ 3, բարձր՝ 5 աշակերտներ: Կրթահամալիրում շփվողականությունը ցածր է 29, միջին՝ 5, բարձր՝ 6 աշակերտների շրջանում:

Ավագ դպրոցականներից «պայքարելու» հակումը ցածր է 14, միջին՝ 6, և բարձր՝ 20 աշակերտների շրջանում, իսկ կրթահամալիրի դեպքում ցածր է 5, միջին՝ 7, և բարձր՝ 28 աշակերտների շրջանում:

<sup>12</sup> Пугачев В. П. Тесты, деловые игры, тренинги в управлении персоналом, М., 2003, с. 212-216.

Այսպիսով՝ ինքնագիտակցության առանձնահատկություններն ուսումնասիրելիս հանգեցինք հետևյալին, որ այլընտրանքային կրթահամալիրի աշակերտներն ավելի շատ են հակված անկախ լինելու, առավել շփվող են (չնայած տարիքային առանձնահատկություններով պայմանավորված՝ այս տարիքայինները համեմատաբար քիչ շփվող են) և հակված են պայքարելու և իրենց տեսակետն առաջ տանելու (անգամ եթե դա սխալ է): Նրանք փորձում են տարբերվել և նույնություններ չեն սիրում:

Այս արդյունքների պատճառները կարող են տարբեր լինել: Ենթադրվում է, որ տարբեր կրթական հաստատություններում սովորող ավագ դպրոցականների ինքնագիտակցության բարձր մակարդակի ստացման հիմնական խթանող գործոններից մեկը ստեղծագործական ազատ ինքնաարտահայտվելու հնարավորությունն է:

### ОСОБЕННОСТИ САМОСОЗНАНИЯ СТАРШЕКЛАССНИКОВ (на примере учебных заведений РА)

МАТЕВОСЯН Э. С.

Резюме

Существует много факторов, меняющих самосознание старшеклассников: школьная атмосфера, окружение, гендерная принадлежность и т. д. Помимо этого на формирование самосознания старшеклассников серьезное воздействие оказывают характерные для этой возрастной категории физиологические процессы. Однако решающую роль в этом вопросе должна играть образовательная среда. Исходя из сказанного необходимо внести позитивные изменения в процесс обучения, попытаться сделать его более интересным, а учеников — главными действующими лицами в этом процессе.

### FEATURES OF SELF-CONSCIOUSNESS OF SENIOR PUPILS (on the example of the educational institutions in the Republic of Armenia)

E. MATEVOSYAN

Abstract

There are many factors that change the self-consciousness of senior pupils: the school environment, gender identity, etc. In addition, typical for this age group physiological processes have a serious impact on the formation of self-consciousness, too. However, the educational environment should play the decisive role in this process. Proceeding from the above mentioned, there is a need to make positive changes in the educational process, try to make it more interesting, and the pupils should be the key actors in this process.